

ՔԱՐՈԶ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԶՈՐԱՎԱՐԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

«Յանուն Հօր եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Երթայք գործեցէք՝ մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ ի կեանսն յաւիտենականս» (Յովհան. Զ 27):

«Գնացէ՛ք աշխատեցէք ոչ թէ կորստեան ենթակայ կերակրի համար, այլ այն կերակրի, որը մնում է յաւիտենական կեանքի համար»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այս խոսքերը Քրիստոսն է ասել իր աշակերտներին, որոնք հետևելով Տիրոջ խոսքերին, քարոզելով սփռվել են աշխարհով մեկ:

Նրանցից երկուսը՝ Ս. Թադեոս և Ս. Բարթուղիմեոս առաքյալները, գալիս են Հայաստան աշխարհ քարոզելու և իրենց արյունը թափելու հանուն իրենց հավատքի մեր հայրենի հողի վրա:

Ապա Ս. Գալանե և Ս. Հռիփսիմե կույսերը, իրենց քառասուն ընկերուհիների հետ, հալածվելով Հռոմի Դիոկղետիանոս կայսրից, գալիս են և ապաստանվում Հայաստանում, ապա քարոզում և նահատակվում Տրդատ Գ թագավորի կողմից:

Գալիս է Ս. Գրիգոր Լուսավորիչը և քարոզում չարչարանքների գնով Հայաստանը քրիստոնեության դարձի բերում և ժողովուրդը քրիստոնյա մկրտում:

Հայաստանը դառնում է առաջին պետությունը աշխարհում, որ քրիստոնեությունը ընդունում է որպես պետական կրոն, և Սուրբ Գրիգոր Լուսավորիչը լինում է Հայաստան աշխարհի առաջին Հայրապետը, 301 թվականին:

Այնուհետև մոտ մեկ տասնամյակ հետո, 313 թվականին, Կոստանդիանոս կայսրը հրովարտակով քրիստոնեությունը պետական կրոն է հռչակում ամբողջ Հռոմեական կայսրության մեջ: Այս առաջին երեք դարերում քրիստոնյա լինել՝ նշանակում էր Քրիստոսի համար արյուն թափել: Եվ այդ մարտիրոսների արյունը առատորեն թափվում է նաև մեր հայրենի հողի վրա: Բայց քրիստոնեության հաստատումով նահատակությունը վերջ չի գտնում:

Կոստանդիանոսի հաջորդներից մեկը՝ Հուլիանոս Ուրացող կայսրը, ուրանում է քրիստոնեությունը և կրկին հալածանք ընկրում քրիստոնյաների դեմ:

Այս հալածվողներից մեկը Սարգիս զորավարն է լինում, որը ծառայում էր Հռոմի բանակում: Նա իր զորքին քրիստոնեություն էր քարոզում, իսկ նրա ծագումը Հայաստանի հարևան Կապադովկիայի Կեսարիա քաղաքից էր և հավանական է, որ Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասին լսած լիներ: Ու փախչելով Ուրացող Հուլիանոսի հալածանքներից, գալիս է և ապաստան գտնում քրիստոնյա Հայաստանում՝ Տրդատի թոռ Տիրան թագավորի մոտ:

Միաժամանակ Հայաստանում մնալուց հետո անցնում է Պարսկաստան և ծառայության մեջ մտնում Շապուհի բանակում, որպես զորավար: Այստեղ էլ շարունակում է իր քրիստոնեական քարոզչությունը և շատերին քրիստոնյա դարձնում:

Շապուհը լսելով այն ամբաստանությունները, որ Սարգիս զորավարը իր զինվորներին քրիստոնյա է դարձնում, հրամայում է նրան, կրակին երկրպագել: Սարգիս զորավարը մերժում է արքայական հրամանը որպես քրիստոնյա զինվորականի, և Շապուհը, չարչարելուց հետո, իր որդու՝ Մարտիրոսի հետ միասին սպանել է տալիս նրան գլխատմամբ:

Այդ մասին Վարք Սրբոցից կարդում ենք. «Եվ ձեռքերը տարածելով Սուրբ Սարգիսը ասաց բարձր ձայնով,—Տեր Աստված հավիտենական, որ ինձ արժանի արիր մահանալու քո սուրբ անվանդ համար, լսի՛ր քո ծառայիդ աղաչանքները, ընդունիր ինձ նրանց հետ, որ սիրեցին քո գալստյանդ օրը և քեզ ուղեկից եղան խաչի և մահվան չարչարանքներով: Եվ եթե չարից խաբվելով մեղք եմ գործել քո առաջ մանկությունից մինչև այսօր կամա թե ակամա, գիտությամբ թե անգիտությամբ, լվա՛ և մաքրիր ինձ ողորմությամբ՝ իմ արյան հեղումով: Քո հավատացյալներիդ էլ, նրանք, որ սուրբ անունդ են հիշում, մեղքերի թողություն պարգևիր և յուրաքանչյուրին հոգևոր և մարմնավոր վտանգներից փրկիր և ախտերից սրբիր: Եվ ընդունիր իմ հոգին արդարների օթևանը հավիտենական հանգստի համար և քեզ փառք հավիտյանս հավիտենից ամեն»: Այս ասելով՝ ծնրադրում է դեպի արևելք, խաչակնքում և պարանոցը խոնարհելով սրի առաջ, ասում.

«Տեր Հիսուս, առ իմ հոգին»: Եվ դահիճը սրով կտրում է երանելիի սուրբ գլուխը»:

Այս հակառակ Շապուհ արքայի հրամանին, նահատակի հավատարիմ զինվորները թաղում են իրենց զորավարի մարմինը՝ նույնպես արժանանալով նահատակության:

Երեկ մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնեց նրա որդու՝ Մարտիրոսի և հավատացյալ տասնչորս զինվորների նահատակության հիշատակը: Մեր ժողովուրդը շատ է սիրել և սիրում է Սուրբ Սարգսին: Նա մեր ազգային սրբերից մեկն է: Նրա և բոլոր մեր մարտիրոսների արյունը կարծեք ներկել ու կարմիր է դարձրել մեր սուրբ խորանների քարերը ու կարմիր քարից՝ խաչքար կերտել: Իսկ ինչու մեր ժողովուրդը այնքան սիրում է Սուրբ Սարգսին, որ նույնիսկ իր քաղաքամայրի սրտում նրա անունով հոյակերտ եկեղեցի է կանգնեցրել: Պատճառը այն չէ՞ արդյոք, որ նա ծնվել ու մեծացել էր Կապադովկիայի Կեսարիա քաղաքում, ուր նա սովորել և քրիստոնյա է դարձել մեր Մեծն Գրիգոր Լուսավորչի ձեռքով: Լուսավորչի դարձի հրաշքը չէ՞ր, որ նրան բերում է Հայաստան աշխարհ, որպես քրիստոնեական ապաստարան՝ Ուրացող Հուլիանոս կայսրի հալածանքներից: Եվ վերջապես, Հայմամուրքից իմանում ենք, որ մեր սրբասուրբ վարդապետը՝ Մեսրոպ Մաշտոցը, գտնում է Սուրբ Սարգսի անունը և փոխադրում Արագածոտն գավառի Կարբի գյուղ և նրա վրա վանք կառուցում.

«Եւ յետ ժամանակաց եկեալ անդր Մեծ վարդապետն Մեսրոպ՝ եբարձ զմարմինը նորա և տարաւ ի Կարբի, և եդ պատուով ի յՈւշի. և եղև տեղին վանք հռչակաւոր վասն բազում ազանչելեացն՝ որք անպակաս լինեն անդ մինչև ցայսօր»:

Մեր ժողովուրդը միշտ զգացել է, որ Մեսրոպ վարդապետի սուրբ ձեռքերն են դիպել Սարգիս Զորավարի անմունին, և միշտ հայցել է նրա օրհնությունն ու բարեխոսությունը: Այսօր, հազար հինգ հարյուր և ավելի տարիներ հետո, երբ նշում ենք Սուրբ Սարգսի անմոռաց հիշատակը, մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի խոսքը իրականացած ենք տեսնում: Նա զոհեց մարմնականն ու երկրայինը՝ հոգեկանի ու երկնայինի համար, և հավիտենական կյանքի արժանացավ: Իսկ մենք այսօր բավարարվելո՞ւ ենք միայն երկրային կյանքով, թե սովորելու ենք նրա և մյուս սրբերի օրինակից: Թող ամեն մի հավատացյալ ի՛նքը տա այս հարցի պատասխանը: Իսկ մենք՝ հայ քրիստոնյաներս, ուխտել ենք հետևելու Քրիստոսի և իր աշակերտների օրինակին, որոնք ակնհատես եղան իր առաջին գալստյանը և սրբերի հետ մեկտեղ հավատացին իր երկրորդ գալստյանը և զոհվեցին այդ հավատքով: «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն, օրհնեալ որ գալոցդ ես, օրհնութիւն ի բարձունս»: Այժմ և միշտ հավիտյանս հավիտենից ամեն:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեան. ամէն»:

ՍՏԵՓԱՆՈՍ ԱԲԵՂԱ ՉԱՔԱԼՅԱՆ